

ՉԱՅՆԵՐՆ ԱՍԷՆ...

Ապրիլեան եղեռնի տարեդարձին

* * *

Ձայներն ամէն վշտակարկաչ,
Ձայներն ամէն լալահառաչ.
Ձայներն ամէն, եկած մօտէն եւ հեռուէն.
Ձայներ լըռած, ձայներ մարած.
Ձայներ երգի պէս մեղմասաց,
Սրտիս ուղղուած դատաստաններ,
Հարցումներ են հոգեմբմունց
Ականջներուս եւ խղիւս մէջ
Աղեկտուր ճիչեր են սուր.
Վէրքեր են լուռ,
Մահագանգի միշտ կրկնւող
Ղօղանջումներ են վշտալուր...:

* * *

Զի՛ս կը կանչեն մարդկայնական
Շըշուկներն ու հեծֆերն ամէն...
Մին՝ իր ողբով ու եղբրգով,
Միւսն իր կոծով եւ հծծիւնով,
Ուրիշ մ'ահա
Պահած իր խոր լըռութիւնով...:

* * *

Ու ես կ'երթամ հուններն ի վեր
Արձագանգող այդ կանչերուն,
Մերք քոչելով, մերք կառչելով
Կամ բախելով սեպ ժայռերուն
Համբուս վերել իբրեւ պատուար...
Ու ես կ'երթամ անմըխիթար,
Կարօտաբաղձ կըռուկկին պէս,
Մերք կափաւ նըման քեքեւ
Թրվրալէն, ու մերք անյոյս
Ցաւերու դէմ մորմոքելէն...
Մերք գայրացած եւ յիշաչար՝
Անէ՛ծֆ տալով
Կեանքն արիւնող եւ աւերող
Ոգիներուն դէմ բռնակալ՝
Պայֆարելով անհաւասար իմ ոյծերով...:

Սիրտս է ծիծա՛ռ՝
Վամիներէն ու գաղթերէն
Հալածական...
Իր ուժասպառ, հէզ քեւերուն
Էսպած երազն ու սեկնն անհուն՝
Կ'երթա՛յ ֆարէ ֆար իյնալէն,
Անկարեկիր ժայռերու դէմ,
Էութերու դէմ արիւնելէն,
Բա՛ց անդադար ծառանալէն,
Ընթանալէն համբէն դժուար,
Դէպի բոլո՛ր տառապահար
Էութիւններն անմըխիթար...:

* * *

Ու ես կ'երթամ,
Սիրտըս՝ ձեռքիս մէջ ամփոփած,
Սիրտըս աչքիս մէջ ցոլացած
Իբրեւ արցունք...
Սիրտըս վարդի պէս ֆաղելով
Շրթներուս վրայ
Որպէս ֆերքուած...
Ու ես կ'երթամ կարօտներու
Եւ յուշերու բացած հունէն
Մի՛շտ անմըկուն ու վերացած...:
Ուրախութիւն մ'ափերուս մէջ,
Եւ շրթներուս վըրայ սեղմած
Խօսք մը սիրոյ կարօտաբաղձ...:
Ու ես կ'երթամ
Յիշատակի պուրակներէն՝
Դէպի տեսիլս անվերադարձ...
Դեռ առաւօտ ու լոյս չեղած,
Եւ կ'արթննամ սակայն ընդոտ:
Բազմաշառաչ շանքեր, շանքեր,
Որոտումներ կը փոքորկին
Ու շեփորներ կը գալարուին
Հոգիս խոր... ինձ կը քըւի

Թէ մարդկային ցան ահաւոր՝
Ես կ'օրօրեմ քեւերուս վրայ
Իմ վիրաւոր:
Ինձ կը քըւի
Թէ փոքորկաւ ծովերու խոր
Նաւաստիներ եւ համբարդներ
Կը խեղդըլին...
Ինձ ուղղելով օգնութեան կա՛նչն
Արտասուվոր...
Ինձ կը քըւի
Մեծ ոնիրէն հալածական
Կարաւանին՝
Լքել անվերջ, աղիւղորմ
Ողբերն այն հին...
Ձայներն ամէն որոնք կու գան
Աւազներէն անապատին...
Հըրընչացող սայլե՛ր, սայլե՛ր,
Որոնք ահեղ, հոծ ժըխորով՝
Կը լեցնէին մահուա՛ն ուղին...
Շատո՛նց լըռած ու մոխրացած
Շրթներ մեղրէ՛ ինձ կը ժպտին...
Զիս կը կանչեն հովիւն ձայնով,
Աշման դեղին տերեւներու շրշիւններէն
Հիւծախտամահ ֆերքողներու
Տրտունջէն անգուսպ ու վիրաւոր...
Լի՛ դեռ կեանքի՛ն մեղեդիով —
Յանո՛ւն կեանքին...:

* * *

Զիս կը փորձէ Սէ՛րը կրկին...
Մրմունջներով իր դաւադիր
Եւ ապարդիւն խոստումներով
Իր գգուածայն...:

Հոգեվրդով եւ անկազին՝
Կ'ուզեմ վազե՛լ, հասնի՛լ ձայնին...
Խառնել երազն իմ անյագուրդ՝
Լք Լա՛մբալի՛ն...
Սակայն Ձմե՛ռն է քրջաճայն
Որ կը գրկէ ներմակ շուշանն
Իմ հոգիին...
Եւրո՛յ լըռ Լումար կարծեա
Սրտիս տանա՛րն հիմնայատակ...
Ու վերջնական...:

* * *

Զո՛ւր են, ուրեմն
Տառա՛ւանքի, երջանկութեան
Շեփորումներն հոգեաւսան,
Յա՛նձն սիրոյ մեծ երազին...:

* * *

Բա՛ց դու՛մ Ձայներ տիեզերքի,
Զայնե՛ր կեանքի, կենդանութեան,
Ա՛նջներուս եւ սրտիս մէջ
Դաշնակցե՛ք քրպէս նըւագ,
Ձայնե՛ր ցաւի կամ ցնձութեան,
Ձայնե՛ր հովի եւ սըրինգի,
Ձայնե՛ր փողի կամ փոքորկի,
Որոտացե՛ք շանքերու պէս,
Շառաչեցե՛ք բարկութեամբ լի
Կամ սիրերգի պէս հեշտանայն...:
Լըռութեան մեծ սուգին առաջ,
Մահուան ահեղ մուտքին առաջ,
Օ՛, քնդացե՛ք մեծաշառա՛չ...
Ձայնե՛ր, ձայնե՛ր դու՛մ յաղթական:

ՄԱՌԻ ԱԹՄԱՃԵԱՆ